ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***

***ՕՐԵՆՔԸ***

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի 21-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 2-րդ կետը լրացնել նոր «գ» ենթակետով.

«գ. բժշկական օգնության և սպասարկման գործունեության լիցենզիա ունեցող կազմակերպությունները՝ «բժշկական հաստատության դեղատուն» դեղատնային գործունեություն համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:»,

2) 7-րդ մասի 1-ին կետում «ֆիզիկական անձի» բառերից հետո լրացնել «և նրա ընտանիքի անդամների (ամուսին կամ ծնող, ~~որդեգրող ծնող~~, խնամատար ծնող կամ երեխա, ~~որդեգրված երեխա~~, ~~կամ խորթ երեխա~~ կամ հոգեզավակ կամ քույր կամ եղբայր կամ տատ կամ պապ կամ թոռ)» բառերը, *իսկ «համար» բառից հետո լրացնել «ոչ ավելի քան 10 անվանում, յուրաքանչյուրից՝ հինգական սպառողական փաթեթ՝» բառերը:*

:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: